

Փ Ո Ւ Ն Չ

Օ Ր Ա Ք Ի Ր

Թիի 422

ՉՈՐԵՒՇԱՐԹԻ

1869 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1

Ամեն օր կհրատարակուի : — Հատը 10 փարայ է : — Պօլիս բաժանորդ ըլլալ ուզողը մէկ արծաթ Մէճիտ պիտի վճարէ 400 թուոց համար իսկ գաւառաց մէջ 25 դր, դարձեալ 100 թուոց համար, թղթատարութեան ծախքէ ազատ ըլլալով : — Ծանուցման տողը 40 փարայ է մէկ անգամի համար : — Լրագրիս վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ վարի գրանը կից նոր Գրատունը :

Վ. ՊՈԼԻՍ . — ԳՈՆՍՈՒԼԻՏԷ

	ՄԸ	ԻՐ
30 սեպտ. երեքշաբթի երեկոյ գոցուեցաւ	47	7
1 հոկտ. չորեք. առաւօտ բացուեցաւ	47	3
ժամը չորսին	46	38

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Պատր. Փոխանորդ գեր. կարապետ վարդապետը խառն ժողովոյ մեծ. էֆէնտիֆներուն հրաւիրագիր ուղղելով խնդրեր է որ վաղը ժողով կազմեն Ղալաթիոյ խորհրդարանը :

Այս հրահերն վսեմ. Օտեան էֆէնտիֆին ալ եղեր է :

Աւերորդ չեմք համարիր այս առթիւ դարձեալ կրկնել թէ՛ գաւառներէն եկած բազմաթիւ գրութիւնները Պատրիարքարանի դիւանատան մէջ իրարու վրայ դիզուած մնացած են : Ժողով կուզէ որ զանոնք ուշադրութեան առնէ և անյապաղ պարտուպատշաճ անօրինութիւններն ընէ :

Խառն ժողովոյ մեծ. անդամոց և մասնաւորապէս վսեմ. Օտեան էֆէնտիֆին խղճին չդպչիր այս վիճակը :

Միլիոնաւոր Հայոց գործերը երեսի վրայ մնա՛ն :

— Մէճմուայի — Հափատիս լրագրոյն թերթերուն գինը քանի մ'օրէ ի վեր սովորականէն աւելի բարձրացած է : Երէկ կամուրջին գլուխը տեսանք մէկը որ բոլոր լրագիր ծախողները տակնուվրայ կընէր և յիշեալ լրագրոյն հին թերթերը կիֆնտուէր, 20 փարայի տեղ մինչև 20 դուրուշ տալու յանձնառու ըլլալով, և չգտնուելուն վրայ կցաւէր :

Ուստի ծանուցանելով Մէճմուայի Հափատիսի մեծարգոյ անօրինութեան, կյուսամք որ վնասուած թերթերը կրկին ապագրել կուտայ և գոհ կընէ հասարակութեան հետաքրքրութիւնը :

Իսկ գեր. Հասուն էֆէնտիֆին կը ծանուցանեմք թէ իւր բանադրանաց կամ արգելման արդիւնքն է, որ կը թափի Մէճմուայի վրայ և պիտի թափի այսուհետև :

— Կայսերական կառավարութիւնը ամենյարգանք ու մեծարանք Գաղղիոյ կայսրուհւոյն նուիրելու համար խիստ շքեղ պատրաստութիւնները ըրած է և կընէ : Մեր ազգն ալ, իբր գլխաւորն ճանկաստանի ազգաց, պար-

ասուոր է յանուն ազգին շնորհաւորել
Նորին վեհափառութեան գալուստը :
Ուստի վաղուեան խառն ժողովին ա-
ռաւին գործն ըլլալու է որոշել թէ
ինչպէս պիտի ներկայացուի կայսրուհի-
ւոյն : Պէտք է որ այս ներկայացումն
չքեղ և հանդիսաւոր կերպով ըլլայ :

... Խմբագիր

Բերայի երկսեռ վարժարանաց
նորակազմ Հոգաբարձութեան կը հար-
ցնենք թէ՛ վարժարանաց պարագոյ
օրերուն տահմանը մինչև երբ է . եւ
թէ՛ Նարեկեանը քննութիւն տալուն
համար շարժուման մը պարագոյ խօսք
կար , որուն ըսելիք մը չունէինք . սա-
կայն շարժը կրկնուեցաւ և գարոցը
դեռ չբացուեցաւ : Իսկ Էջմիածնայ և
Հոփփախեանց վարժարաններու հա-
մար ի՞նչ կար որ գոյուեցան , և Բե-
րայի պէս թաղի մը մէջ մեր զաւակուն-
քը գաւառիութեան մասնեցան որ
քիչ փրատակար չէ . . . :

Հոգաբարձութենէն կենդրոնի ի-
մացունել մեզ թէ՛ տակաւին որչափ
պիտի աւել գարոցներուն դոց մնալը
որպէս զի գիտնանք ինչ ընելիքնիս և
իրենց ըսելիքնիս :

Ա հոկտ . 1869

Ի քիւնայ Ժնոցայ
աշակերտաց

... Խմբագիր

Ձեր օրագրոյն սեպտ . 30 երեք-
շարժի օրուան թերթին մէջ գարձեալ
կարդացի ճաճատ Լուսփեանստորա-
գրութեամբ նամակ մը , որուն գը-
ռեհիկ սճը և կանացի կատակաբա-
նութիւնը կարդացողը հարկաւ իրա-
ւունք պիտի տայ իմ « զինքը փոյտեան
ճանչելը » : Ուստի ես իրեն ասկէ

աւելի խօսք զրուցելը դարձեալ ին-
ծիպատիւ չհամարելով սա միայն կ'ը-
սեմ որ հասարակութիւնը շատ լա-
ղիաէ գատել . իրեն նման խմաստակ-
ներէ ոչ գովեստ լսելը ինծի ուրախու-
թիւն կը պատճառէ , և ոչ պարտաւ լը-
սելը՝ ցաւ : Երկուքիս գրուածներն
ալ հասարակութիւնը կարդաց : Թող
պարոն ճաճատը կրցածին չափ փրփրի
և զայրանայ . յաւիտեան պիտի նկատէ
իմ նամակիս մէջ իր ճշգրիտ պատկերը
որուն վրայ ինքն պարոն ճաճատը նոր
և աւելի ճարտար վրձին մը զարկաւ .
իր այս վերջին նամակաւ :

Ե . Մուրառեան

Ահա ասիկերէկ խոստացեալ դա-
ւառային նամակներէն մէկը այսօր կը
հրատարակեմք , որ Սըղբերդի վիճա-
կին վերաբերեալ այլ և այլ տեղեկու-
թիւններ կ'զարդենակէ :

« Մեր վիճակաց նահանգներու գա-
ւառներու գիւղերու գիւղաքաղաք-
ներու դետերու և լճերու վրայօք տե-
ղեկութիւն ուզած էիք : — Սըղբ-
ար գաւառներու մէջ տեղն է , և ա-
նոր արևելից կողմ հետևեալներն են .
Շերվան որուն մէջ կան 14 գիւղ հայ ,
որոնցմէ հինդը 4, 3 և 6 տունէ բաղ-
կացեալ են . իսկ մնացեալքը 10, 13, 20
և 25 տունէ . Հիզան նահանգի մէջն
ալ կան 42 գիւղ հայ . 30 գիւղ ալ
Սպարիկերտու նահանգին մէջ կան , 3
ալ վանք , մէկը Գեղիս գիւղին մօտ ըլ-
լալով անոր անուամբ յորջորջեալ Գե-
ղիսու վանք կըսուի , և դոց դրած է-
Ք . դարձեալ մերձակայ գիւղի ան-
ուամբ Բաղենից վանք կըսուի , և սըր-
բոյն անունն ալ Ս . Ստուածածին է .

այս վանքի վանահայրը քահանայ մ'է. ինքն և իր եղբայրներ հանգերձ 30 ընտանեօք մէջ նստած են կ'ուտեն . Գ. նմանապէս Սկնւառակու Ս. Գէորգ հոգևաւոր վանքի վանահայրը մէկ այրի տէրտէր մ'է . հայերէն Մամբրտան և տաճկերէն Նէմբան ըսուած դաւառնալ 20 տարի առաջ 250 տունէ բազկացեալ 16 գիւղ հայ կային յինքը , բայց տէր տիրական չունէ նալով Ալըկան անաւնով վրանաբնակ Աշիրաթ զգիւղեր իրարու վաճառելով և գնելով ամեն ձմեռն և ամռան մեծ մասն ալ անոնց գիւղերու մէջ նստելով աւրեցին , հիմայ հազիւ թէ 50—60 տուն մնացած են :

Անցեալ տարի արժ . Սուաջնորդը ֆուրախտանու կուսակալ բարձր իսմայիլ փաշային յիշեալ Աշիրաթի վրայ տեղեկագիր տուաւ և գործադրուեցաւ , որ այսուհետև ոչ գիւղերը իրարու վաճառեն , և ոչ ալ նոյն դաւառք տօք կոխեն , ինչպէս որ այս տարի ամենևին կոխել չտուին : Այս դաւառին մէջն ալ 2 վանք կան , մէկուն անուն Ս. Սատուածածին է , բոլոր սենեակներ յարդանոցներ ակոտներ և այլն փլչած են , եկեղեցին միայն կանդուն է և կալուածներ դրած են : Իսկ միւսն ալ Ատարանից Ս. Խաչ վանքն է , որուն վրայ Ս. Գրիգոր Նարեկացին ճառ խաչի յօրինած է , զոր կարդալով անոր շէնքերու ինտոր ըլլալը կրնաք խմանալ . նոյն շէնքերն գեռ. անխախտ դրած են , բայց հիմա յարդանոց մասան և ոչխարաց գոմ դարձած են . նմանապէս տէր չունէ նալուն անոր վանահայրն աշխարհական մ'է : Օսման աղա անունով քիւրա

մ'ընտանեօք հոն նստելով և բոլոր բերքեր և եկամուտներ յախշտակելով տարին 40 ջորիի բեռն յորեան կառնէր կուտէր . անցած տարի անոր համար ալ արժ . Սուաջնորդը բողբջեք բարձր . կուսակային . Տամիս Տիգրանակերտ բանա քաշելով և անցած մեծ Ջատիկէն ետքը ազատեցաւ և եկաւ ի Սղերտ . միւթասարքի փաշային և ժողովոցն ներկայացնել տալով անոր ձեռք բողբոլին վանքէն քաշել տալէն զատ փաշայի կնքով ձեռագիր ալ առաւ իր խօսքերուն համեմատ , որպէս զի այսուհետև ամենևին վան վանքին չմօտի , իսկ եթէ մօտելու ըլլայ իւր պատիժ չարաչար կրէ : Հիշան նահանգին մէջն ալ 4 վանք կայ . Ա. Ս. Տրդատ թագաւորէն կառուցեալ Ս. Խաչ անունով հոգևաւոր վանքն է , Տրդատ թագաւորի աղեղանեան ալ գեռ. գաղտնի պահարանի մը մէջ դրած է : Մինչև Մեվլաթօփսի պատերազմին սկիզբն եպիսկոպոս մի 1—2 կամ աւելի վարդապետ կային , անտէրոնչ սրբեր ծերեր և պառաւունք կպատասպարուէին , կարդալ սորվոյ քանի մ'աշակերտ ալ միշտ պակաս չէին ըլլար իսկ հիմայ գոց դրուած է . եթէ հոգ տարուելու չըլլայ պիտի փլչի . Բ. Բարեձորու Ս. Մերկերիոս անունով եօթն խորան վանք , իր բոլոր շէնքեր դրած են , երկիրներ կնշակուին , ըստ բաւականին շէն է . բայց իր վանահայր աշխարհական մ'է , և այր մ'անդամ չճանչէր . Գ. Ս. Գամաղիէլ վանք , որոյ վանահայրեր իրարու հարազատ եղբայր վարդապետ և քահանայ մ'են . Գ. Սորվայ Ս. Սուաջնուածին վանք , որոյ վանահայրն

ալ քահանայ մ'է : — Պէրվար գաւառին մէջն ալ 11 գիւղ հայ կային , անոնք ալ տէր չունենալուն ջիր և ցան եղած են . 311 տունէն հիմայ հազիւ թէ 40—50 տուն մնացած են . այս գաւառներ Սղթամարայ թեմերն են , իրարու վրայ հաշուելով 1100 կամ 1200 տուն ըլլալու են : Սղերտէն դէպ ի հիւսիս 4 ժամու ճամբայ հեռու Չըռըկան գաւառի մէջն ալ ջիր ու ցան 100 տուն կան : Արևմտեան հարաւ Պամէրտ գաւառին մէջն ալ ջիր ու ցան 100 տուն մը կան , հարաւ Պոհրան նահանգի մէջն ալ 250 տուն մը կան , իսկ արևմտեան և արևմտեան հիւսիսային կողմերը խարզան , Ափկան , Պըչերի , Սասուն և Բոնաչէն գաւառներու մէջերն ալ հազիւ թէ 1350 տուն գտնուին , 200 տուն ալ Սղերտին մէջ :

Մ. Գ. Ե. Լ. Ը. Կ. Գ. Ը.

Ռումանիոյ և Սըրպի իշխանութեանց կողմանէ յատկապէս մէկ մէկ պաշտօնակալ մայրաքաղաքս պիտի գան , Գաղղիոյ կայսրուհւոյն շնորհաւորութեան համար :

— Իպրայիլի մէջ վառողի շտեմարան մը պայթելով , շատ մարդոց մահուան ու վիրաւորուելուն պատճառ եղեր է :

— Պէյլէրպէյիի պալատին մէջ հեռագրական սենեակ մը և գործակալներ որոշուեր են , սրպէս զի կայսրուհին ուղած ստենը հեռագրական յարաբերութիւն ունենայ Նաբոլէոն կայսեր հետ :

— Ֆիզանի գայմագամ Բառֆ փաշան նախորդ ամսոյն 20ին կնքեր է իւր մահկանացուն :

— Սպանիոյ առժամանակեայ կառավարութիւնը որոշած ըլլալով որ Գուպայի ապստամբութիւնը զսպելու համար նաւատորմիդ մ'ալ ղրկուի , ծովային զորք գրեելու ետևէ է : Գալթալնիայի մէջ բազմաթիւ կամաւորներ կըրուին եղեր : Կըսուի թէ այս գաւառին բնակիչք Գուպայի հետ վաճառականական ընդարձակ յարաբերութիւն ունենալով , կուզեն որ պատերազմը ամենայն սաստկութեամբ յառանջ տարուի և ապստամբութիւնը ժամ յառաջ զսպուի :

— Բեդերսպուկի մէջ առաջիկայ 1870 տարւոյն մայիսի 15էն յուլիս 15ը մեծ Արուեստահանդէս մը պիտի ըլլայ , երկրագործական ու արուեստական բերքերու վերաբերեալ :

— Կալկաթայէն եկած հեռագրէ մը կիմացուի թէ , Աֆղանիստանի իշխանը իւր թշնամեաց կողմանէ վերաւորուեր է , բայց ծանուցուած չէ ինչպէս վերաւորուած ըլլալը :

Էթովի կամ Ֆենի Իպարէ անունով նոր հրատարակութիւն մը 8 ական զուրուշի կծախուի Պոլիս Չագմագըրլար Եօգուշու Գավաֆեան գրատունը :

Պոլսոյ քաղաքապետութեան ժողովին անդամ մեծ Մէհմէտ Միտահաթ էֆէնտին գաղղիարէնէ տաճկերէնի թարգմանած է այս կարևոր ու պիտանի հեղինակութիւնը :

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԵՐ
Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Ե. ԳԻՒՐԳՅԱՆ